



ԱՐԾՈՒՄ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆ

ԹԻՒՆԻՑԵԱԼ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԹԵՒՕԳ
ՅԱՐԺՈՒՆԻ ՄԵՆԵՏԱՆԻՆ ԿԱՐԴԱՆ

ԽՐԱԿԻՐ ՀԱՅԿԱՍՏԱՆԻՈՒ
ՄԿՐՏԻՉ ԿԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1882

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԱՐԴԱՆ

Ի ՏԳՐԱՐԵՆԻ ԿԱՐԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆԻ ԿԱՐԴԱՆ

Ի ԿԱՐԴԱՆ

சென்னை நகரம்

சென்னை நகரம், சென்னை நகரம்
சென்னை நகரம், சென்னை நகரம்

சென்னை நகரம், சென்னை நகரம்
சென்னை நகரம், சென்னை நகரம்

சென்னை

சென்னை நகரம்

சென்னை

சென்னை நகரம், சென்னை நகரம்
சென்னை நகரம், சென்னை நகரம்



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Դ .

1862

ԹԻՒ 11

ԱՐԾԻՒ ԳՆԱՅ ԻՏԱՐՕՆ

ՄԱՅՅԻ Հայկազն հասարակութեան համաձայն խրնդ-
րանք եւ Կ. Պօլսոյ Աղգային առժամանակեայ Վարչու-
թեան խառն ժողովոյ որոշմամբ, նոր օրերս նոր ու փա-
ռաւոր կոչում մը կոչեցին մեր Ս. Հօր :

Վաստուրական Արծուին, հայրենեաց անձնանուէր, Ար-
ժանապատիւ Տ. Մկրտիչ Վարդապետ Խրիմեան կարգեցաւ

Առաջնորդ Տարօնոյ եւ Վանահայր Ս. Կարապետի վանուց .
վարագայ վանահայրութիւն եւ սորա մէջ եղած սկզբը
մուշքներուն տեսչութիւն իւր վրայ մնալով :

Առ այս Մասիս պատուական լրագիր արդէն հրատարա-
կածէ իւր 546 թուոյն մէջ . որոյ այն մասը կարեւոր կհա-
մարիմք դնել այս տեղ :

«Ազգային առժամանակեայ Վարչութեան խառն ժողովոյ
որոշմամբ Գերապատիւ Խրիմեան հայրենասէր Մկրտիչ վար-
դապետը Մշոյ վիճակին Առաջնորդ և Ս. Կարապետի վանուց
Վանահայր անուանեցաւ , Վարագայ վանուց վանահայրութի
իւր վերայ մնալով . այս ընտրութիւն անտարակոյս մեծ գոհու-
թիւն պիտի պատճառէ մեր մշեցի ազգայնոց . որոնք այս
պիսի ընտիր և անձնութեայ հովութիւնը երկար ժամանակէ ի վեր
անժխտելի կարօտուիմը ունէին : Միանգամայն Ս. Կարա-
պետի մեծահռչակ վանքն ալ ասկէց աւելի արժանաւոր
վանահայրմը չէր կրնար ունենալ ամէն կերպ բարեկարգու-
թեամբ զարդարելու եւ Հայաստանի անխնամ մանկանց
լուսաւորութեան կեդրոնմը ըլլալու համար : Այստեղ որ
Ս. Կարապետի վանուց արժանապարգ միաբաններն ալ որ
մօտ օրերս ուսման եւ բարեկարգութեան սիրող լինելին յայտ-
նելով՝ բանիբուն վանահայրէմը զուրկ գանուելնուն վրայ
կը գանգատէին . իրենց այս նորընտիր վանահօր սոգգամիշա-
կան ձեռնարկութեանցն աջակից եւ օժանդակ ըլլալով՝
ընդհանուր ազգին համարումն եւ շնորհակալութիւնը ար-
ժանապէս վայելելու իրաւունք կստանան » :

Այս պաշտօնական տեղեկութիւն եւ բարի ընտրութիւն,
որ նաեւ մի գեղեցիկ խրախոյս առ Ս. Կարապետի վանուց
միաբանութիւն , եւ մի անտարակոյս յոյս տու Տարօնոյ Ազ-
գային հասարակութիւն իւր մէջ կպարունակէ , այս եւ

եւս մեծապէս զնորին ընտրեալ Հայրութիւնն կ'պարտա-
ւորէ, արդեօք եւ մի զգալի ցաւ իւր որդւոց սրտին, Արծ-
ուայ ձաղերուն փափուկ երիկամանց մի զգալի ցաւ կառթէ:

Յաւեցան արդարեւ մեր ամենիս սիրտեր, եւ կ'կարծէ-
ինք թէ իբրեւ ի վայրս տարավայրս մեզանից, Արծուին կը-
տանէին մեզանից, հեռու իւր խեղճ ձաղերից. եւ կ'ցաւէ-
ինք թէ մեք անխընամք. ո՛հ պիտի մնամք:

Վակայն ոչ, ինչպէս կ'զգայինք մեք այնպէս չէր. Արծ-
ուին ոչ երբէք, իսպառ չի հեռանար իւր նախնական եւ իս-
կական բոյնէն. իւր ձագուց մատաղ երամէն. այլ կ'զօրանան
բարձրանան այս նորոգ կարգով իւր հայրենասիրական ա-
զատ բայց խոնարհ եւ աղքատ թեւեր. այսուհետեւ ազդին
փառք եւ իրեն պարտք պիտի առաւելու. անշուշտ եւ իւր
ազգասիրական բաղձանաց մի նոր բաղդ էր այս պատե-
հութիւն, զոր շնորհեց երկինք:

Յառաջագոյն արդէն Վարագայ վանքը հասած էր Ար-
քունի հրովարտակ, եւ Պատրիարքական տեղապահ Ս. Ստե-
փաննոս Արք Եպիսկոպոսին կոնդակը Վ. Պօլից յուղարկ-
ված հրաւիրակիմը ձեռքով, որ էր բնիկ մշեցի:

Յանկարծ հռչակեցաւ այս ուրախացուցիչ համբաւ ինչ-
պէս շատ տեղ, նոյնպէս եւ Վասպուրականիս մէջ. շատերի
սիրտերը ցնծութեամբ լեցուած կ'փութային դիմէին շնոր-
հաւորել Արծուոյն այս նոր ընտրութիւնը: Հայր Արծիւն
եւսկաւ անյապաղ իւր պատրաստութիւնը տեսնել, Ազգայ-
ին վարչութեան կամքը, Արքունի հրովարտակին բաժրագոյն
կարգը, Տարօնոյ ժողովրդեան փառալուծ եւ իւր նուիրական
պարտքը յարգել եւ կատարել. առաջին գործն եղաւ Վա-
րագայ տպագրական մամուլներէն մէկը իւր պարագայիւք
պատրաստել, որ իբեհ հետ տանի Ս. Վարագայի վանքը, ա-

պա Վարադայ վանսացս ներքին եւ արտաքին կառավարութեանց կարգ եւ սահման դրաւ . իւրաքանչիւր գործին եւ պաշտօնին առանձին գործավար եւ պաշտօնակալ կացուցանելով եւ զատ զատ կանոններ գրելով . թէ իկեղեցական, թէ դպրոցական, թէ տպագրական, թէ մշակական եւ թէ տնտեսական :

Մեր Ժառանգաւոր եղբայր Անդրանիկ եւ յառաջապրտակ Մեսրոբ վարդապետն կարգեց փոխանորդ ի վերայ ներքին եւ արտաքին կառավարութեանց . օծակից նորին եւ եղբայր Ժառանգաւորացս շնորհազարդ Յղինկ վարդապետն կառավարիչ եւ դատարան վարժարանիս . իսկ տպարանի շարունակութիւնն յանձնեց սու հասարակ եղբայր յառաջողէմ աշակերտաց աշխատասիրութեան . բայց եւ ոչ առանց իւր տեսչութեան :

Մի ուսումնական խորհուրդ կազմեց նոյնպէս յառաջադէմ եւ երկցադոյն եղբայրներէն . որոնց կարգ եւ սահման յատկապէս ունի գրած եւ հաստատած . միւս ամէն պաշտօններ եւ պաշտօնակալներ ենթարկուած են այս ուսումնական խորհրդեան . որք պիտի խորհեն եւ տնօրինեն վանքին, դպրոցին եւ տպարանին վերաբերեալ ամէն պէտքեր . եւ ինչոր զլիւաւոր կամ դժուարին առարկաներ կրինին , անոնք միայն հաղորդեն իրեն այսինքն Վերատեսչին , որոնց բարեհաճութիւն կամ վճիռ ընդունվի . Լաքտո այնմ գործողովի պիտի Առանձին ատեան է այս ուսումնական խորհուրդ , առանձին դպրութիւն նորա մէջ . ամէն բան , անյգբ , արկածք խնդրուած , կատարած , ել , մուտ , երթ , եկ , դատ , վճիռ պիտի արձանագրվին յատկապէս . եւ պիտի ունենայ այս ատեան վանուց եկամտից եւ ծախուց համար դանձարան , դանձապետ , ծախսարար , տօմարակալ , եւ այլ ամէն պարտ

գաներ, որ կլերաբերին Վարադսյ ներքին եւ արտաքին, հիմ-
նովան եւ պատահական գործոց բարեկարգ կառավարու-
թեան համար :

Ահա այսպիսի կերպով երբոր ամէն բան կարգադրվեցաւ ,
Օգոստոս 19 ին Աստուածածնի Վերափոխման երկրորդ կի-
րակին մի շարժում ներքուստ եւ արտաքուստ սկսաւ վան-
քիս Միաբանութեան եւ Ժառանգաւոր եղբարցս մէջ . կը-
բարախէին ամենեցուն սիրաերը , եւ կ'մորմոքէին ձագուցս
մատաղ ողիք : Այսպիսի զգացմունքներով լցուած պաշար-
ուած էր եւ ինքն իսկ հայր Արծիւ : Արծուոյ հայրենա-
կից բարեկամներ փութացան այն օր Վարադը դալ . տրխ-
րութիւն եւ ցնծութիւն խառն էր ամէնու սրտին մէջ .
այն օր մի տեսարան մի նոր հանդէս էր բացուած . բերկ-
րանք եւ արցունք ամէնիս աչերէն կ'կաթէին :

Ժողովեցան Միաբանութիւն ու խորիս եւ Ժառանգու-
թիւն եղբարցս ուսումնարանը , ուր իներկայութեան ամե-
նից կարդաց հայր Արծիւ վերոյիշեալ կանոնադրութիւն-
ները . եւ հաստատելով իւրութանչիւր ըստ կարգի եւ ըստ
պաշտօնի , սկսաւ մասնաւորապէս յորդորներ , քաջալերս ,
խրատ , սէր եւ առաքինական օրէնքներ ուսուցանել .
Աստուածսիրութիւն , եղբայրսիրութիւն , հեզութիւն , ներողա-
մտութիւն , սէր առ Աստուած , սէր առ Հայրենիք եւ սէր
առ միմեանս : « Չի ուրախանայ Արծուին , ասաց , եւ պիտա-
նի չէք դուք ազգին . եթէ սոսկ ուսմամբ լինի ձեր յառա-
ջադիմութիւն : Իմ պարծանք ձեր առաքելութիւնն է . ձեր
բարի վարք , ձեր Աստուածսիրութեան եւ եղբայրսի-
րութեան քաղցր պտուղներ ես տեսնալով եւ ազգ վայելե-
լով , պիտի ուրախ առնէք եւ փառաւորէք ոչ միայն զմար-
դիկ եւ հայրենիք , այլ եւ զԱստուած . եւ երկինք » Դուք

կապրիք կուսանիք ազգի և հայրենեաց համար. Աստուծոյ է
 երկնից համար : Մտաց լուսաւորութիւն, ուսման կրթութիւն,
 Աստուծոյ մեծութիւն և նորա բարեւարութիւն լաւ ճանաչելու
 եւ այնպէս լաւ ծառայելու համար միջոց մի է : Աս-
 տուծոյ երկրաշածութիւն ձեր ամէն գործոց և խորհրդեան
 մէջ. աշխատեցէք ամէն բան ուսէք, եւ ձեր ուսումնա-
 կանութիւնը Աստուծոյ պաշտաման նուիրեցէք : Աստուծոյ
 ձեզ տուած ձրքերը եւ կենաց օրերը գործեցէք սրբեցէք,
 Երկինք և Հայրենիք կմնան ձեզ. դուք Աստուծով զօրացած
 եւ հրջանկազած Հայաստանի բարի յոյսեր պիտի լինիք :

“Ես միշտ ձեզ հետ չեմ կարող լինել. բայց Աստուած միշտ
 է. Հայր նա է որ յերկինս, ուրեմն ճանաչեցէք, սիրեցէք :

“Ես շատ անգամ կորոշուիմ ձեզմէ. իսկ դուք զգուշա-
 ցէք չխտէք Աստուծոյ և ձեր մէջ. “Ես Աստուած մերձաւոր
 եմ, կասէ Մարգարէի բերնով. այլ մեղք ձեր որոշեն իմէլ իմ
 եւ ձեր ”. զգուշացէք զաւակներս. Աստուած չորոշէք
 ձեզանից : Առանց իմ կարող էք ապրիլ. իսկ առանց Աս-
 տուծոյ ոչ երբէք եւ ոչ ուրեք. առանց նորա ոչինչ մեք,
 ոչինչ դուք. ոչինչ կրթութիւն. ոչինչ գիտութիւն, ոչինչ աշ-
 խարհ. ոչինչ բարիք. ոչինչ սարգիկ. ոչինչ հայրենիք և ոչինչ
 ամենայն .

“ Այս իմ հանապազօրեայ պատուէրներն են առ ձեզ :

“ Ահա ես կերթամ իմ նոր նուիրական կոչմունքիս :

“Ապեք յիս և ես իձեզ : Ձեզանից չեմ հրաժարիր, ձեզա-
 նից չեմ հեռանար. այլ զձեզ զօրացուցանելու կգնամ. իմ
 վստահութիւն և հաւատարմութիւն պահեցէք և պահե-
 ցէք ձեր սիրով, ձեր բարի համբաւով եւ ձեր ժրաջան եւ
 գովելի յառաջադիմութեամբ : Պիտի աշխատիմ ես փոյթ
 ընդ փոյթ ձեզ այցելութիւն առնել, մի արտմիք :

« Կացէք Աստուծով . կացէք սիրով . կացէք ինձմով » : Եւ այլ
այս պիտի ազդու եւ բարոյական խրատներ, որոց ներգործութի
եւս խառնուելով արդէն մեր ամէնից կրած դառն զգաց-
մանց հետ շատերնիս լացինք եւ ամենքս կմորմորէինք . ու
մտնք մեզանից իբրեւ Թարգման իղիմաց համօրէն եղբարց
կարդացին ճառեր եւ մատուցին նորին Հայրութեան, որոց
մինը ահա կհրատարակեմք յօդուածիս վերջը :

Հետեւեալ օր երկուշաբթի առտուն ընդ արշալոյսն տը-
պարանի մամուլը բարձին եւ սայլեր սկսան շարժիլ . շար-
ժեցան եւ առ հասարակ ոտեր եւ սիրտեր ողջ Վարագայ-
նոցս . հայր Արծիւ գնաց սուրբ տաճարին խոնարհ երկրպա-
գութի մատոյց եւ ջերմեռանդ սրտիւ աղօթելով սկսաւ իւր
քայլափոխներ առնել . կարգ կարգ շարուելով միաբանք եւ
ընդառաջ ոտոտուելով ձաղուցս երամք, Թախծագին օրհնա-
բանեալ երգեր երգելով Թուուցինք զԱրծիւն ի Տարօն . Թը-
ռաւ Արծիւ Վարագայ սարէն Տարօնոյ աշխարհք, հովանի
Թողով իւր քաղցր խնամք Վարագայ վերայ, եւ տանելով
իւր հետ մեր ամենեցուն զգացմունք եւ սիրտ :

Ինչպէս սրտիւ, նոյնպէս եւ անձամբ տայ Աստուած, որ
անպառ եւ անբաժան լինի նորա հովանաւորութեան գլխու
թիւն եւ խնամքը վայելել, առանց որոյ չէ հնար գրեթէ
մեզ ապրիլ :

Հայր Արծուոյ հետ գնաց հայրենակից եւ հայրենասէր
Պ, Յակովբն Աղուանեան իբրեւ օգնական . սա որ արդէն
իւր եռանդուն խոհեմ եւ արդիւնաւոր գործունէութեամբ
բաւական ծառայութիւն արած է իւր հայրենեաց եւ ծա-
ռօթ է բազմաց . յուսամք նա եւ պարծանք բերէ Ար-
շուոյն եւ ցնծութիւն սրտի Ազգասիրաց :

Աստուծաբանի դասատուութեան համար տարաւ մի ուշ-

խարհագրութեան եւ թուաբանութեան ուսուցիչ: Մի Սարկա-
ւադ, քանի հատ հրաժիշա երգեցիկ ժառանգաւոր եղբարք,
եւ տպարանի մէջ աշխատող քանի գործավարք:

Տպարան, որ տարաւ Ս. Վարապետի վանքը. անշուշտ մեծ
կարեւորութիւն եւ արդիւնեւորութիւն ունի եկեղեցա-
կան զրեանք տպագրելու, որոյ պայծառութեան եւ օր ըստ
աւսւր ընդարձակութեան տարակոյս չկայ. քանի որ բաւա-
կան հարստութեան միջոցներ եւ եկամուտներ պակաս չեն,
նոյնպէս և այն վանքի սրբէն եղած Ժառանգաւորաց վար-
ժարանի բարեկարգութեան և յառաջադիմութեան մեծ
յոյս կայ, այնպէս որ « Հայաստանի անխնամ զաւակաց
լուսաւորութեան կեդրոնմը կարող է լինել » . վասնզի վա-
րագոյ պէս աղքատ չէ, այլ բաւական և շատ են իւր հարս-
տութիւններ: Սակայն և այս պէտքէ խստովանել որ — Ուր
դանձք բազում, անդ եւ ցաւք բազում. ուր ոսկիք առատ,
անդ եւ թշնամիք շատ. իսկ ուր աղքատութիւն, անդ թէ,
պէտ և թշուառութիւն, բայց ազատութիւն է:

Այս բանիս մէջ ուրեմն կմնայ բարեմաղթել կամք եւ
յաջողութիւն վերին Նախստնամութեան, խնամք պաշա-
պանութիւն Ազգային Վարչութեան, ջանք և կարողութիւն
հայր Արծուոյն. օժանդակ եւ թեւակցութիւն վանուց մի-
աբանութեան, իշխանաց միութեան եւ սիրոյ ժողովրդեան:

Ծանր էր եւէ արդարեւ Արծուոյն համար, այո եւ,
զինք սիրող Ազգասիրաց համար. որ Արծիւն այսպիսի բազ-
մազբազ վիճակի կամ պաշտօնի մէջ ինկնէր, վասնզի արդէն
իսկ մի աղքատ վանքի Վարագայ վանահայրական պաշտօն
իրեն համար ծանր ծանր զբաղմունքներ համարված էին.
Ո՛հ եւ կ' ճնշէին նորա ազատ թեւերը. նորա արած անձ-
նանուիրական ծգունքը տակաւին մի անդորր օրեր, յառա-

Ջադէմ արդ իւնքներ չկարողացան ունենալ այնչափ, որչափ կարելի էր յուսացվիլ այսչափ քրտուկից, այսչափ աշխատութիւնից, մի այսպիսի անձնից. առ որ ամէն ճշմարիտ ազգատէր եւ բարեմիտ հայն իւր համակրութիւն եւ հաւատարմութիւն նուիրած է. Այո փանդի եւ նա ինքն իւր անձը տուած եւ իւր կենաց ամէն վտանգ սիրով յանձն առած յօժար է Աստուծոյ կոչման եւ Ազգի պահանջման ծայնին զհետ ընթանալ, մինչեւ ելանել յողջակէզ խեղան Տեառն ի Բեթէլ :

Արծուին ինչպէս մինչեւ ցայժմ. առաւել եւս այսուհետեւ պիտի հանդիպի դժուարութեանց եւ սարսափելի դժուարութեանց. պիտի ունենայ արգելքներ եւ մեծամեծ արգելքներ. պիտի կրէ ինչպէս վարագայ մէջ աղքատ վիշտեր, նոյնպէս եւ այն տեղ հարուստ նեղութիւններ եւ նոր իմն տեսակ ցաւեր, որոնք գրեթէ բնական են ամէն տեղաց եւ ամէն ժողովրդեան մէջ դանտուիլ, որ եւ կտրծես թէ Արծուոյն իսկ սեպհական ճակատագիրն է :

Ուր գնայ նա, կ'տանի իրեն հետ :

Նա նստած եւ իր բոյնը կ'կրէր դարձեալ այդ արկածները. իսկ պանդխտութեանց մէջ ամէն մէկ յայլափոխին յաւատ այդ ձախորդ եւ դառն զիպուածներ պատրաստ կտրծես կ'ափովէին ընդ առաջ. Արծիւն էր, որ իւր բնական հեղութեամբ եւ երկայնմտութեամբ. անձնանուիրութեամբ եւ անյիշաչարութեամբ աչկունք զէպ ի վերին անխուսափելի յոյսը յառած, կ'թեւակոխէր անցանէր այդ դարիդար վայրերէն, առապար տեղերէն. անսարսափելի անկործանելի մնալով իւր նուիրական ընթացքէն :

Այո եթէ կ'աշխատի եւ կ'ապրի նա կենդանի, Աստուծով է եւ Ազգասէրներով :

Մեր հայրենի երկիրներ, հայրենեաց լեռներ հովիտներ
ողատ չեն տակաւին. դեռ շատ տեղ գիշերներ կ'ընթացա-
րեն. եւ մեր Արծուին ի տուէ եւ ի գիշերի կ'ստաւանի.
անշուշտ տեղ տեղ կանգ կառնէ, տեղ տեղ հանգ կառնէ.
տեղ տեղ կ'հանդիպի մթան, գիշերի, ամպոց, անձրեւի, սա-
րեւի, քարերի, խորերի, ձորերի, գուցէ եւ որսորդի, գուցէ
եւ որոգայթի :

Բայց նա պէտք չէ, այո եւ չէ յուսահատեր, պիտի ըն-
թանայ, պիտի սլանայ. եւ որչափ գնայ, այնչափ զօրանայ :
Քանզի ինքն իսկ առայդ է նուիրական. Աստուած նորահա-
վանի եւ պաշտպան. Ազգասէրքնորա զօրավիգ եւ օգնական :

Տարօնոյ վիճակ մեր հայրենի աշխարհաց կարգին պան-
ծալին եւ ցանկալին է. նորա մէջ դիւցազանց մեր նախնեաց
յիշատակներ, նորա մէջ քաջաց քաջազանց Մամիկոնէից եւ
Հայկազանց արեանց եւ անուանց արիական յաղթանա-
կաց եւ դեռ անմահ մնացած վայրեր, աւերակներ, հնոցեալ
բուրգեր, պարիսպներ, դղեակներ, բերդեր եւ քաղաքներ,
ՀԱՐՔ ԴԱՒԱՌ, ՄԱՆԱԻԱԶԱԿԵՐՏ, ԵՓՐԱՏ ԳԵՏ, ՅՐՕՐԷ, ՕԶՆ,
ՄՈՒՇԵՂԱՇԵՆ. եւ այլ շատ, որոնց անուններ կմոռանամ գրել :

Այն Աստուածաբնակ սրբազնաշէն տաճարք եւ հոյա-
կապ վանորայք. որոց հարք եւ միաբանք հարիւրաւորք, սր-
բակրօնք կրօնաւորք, քահանայք իրենց Ժողովրդեան բաղ-
մութեամբ եւ բարեպաշտութեամբ, իշխանաց Աստուածա-
բութեամբ եւ Ազգասիրութեամբ պարծանք կ'բերէին հա-
նուր հայրենեաց, պարծանք եւ բարիք ողջ հայաստանեայց :
Մեր սուրբ եկեղեցին երախտապէտ է Տարօնոյ զաւակաց.
նորա ծնունդներ երկրի պարծանք եւ երկնից բարձունք գլա-
ւել են. նոցա մարմիններ մեր սուրբ եկեղեցեաց ծոցում. եւ
նոցա հօգիք երկնից զրկում կ'պահպին փառօք : Ուստի

Մերտութիւն, ուստի՞ խորենացին, ուստի՞ վարդան, ուստի՞ վահաններ, ուստի՞ լուսնիներ, եկեղեցաշէն, աշխարհաշէն, ազգաշէն եւ Թագաւորաշէն անձինք : Ամէնքն էլ իմաստունք եւ սուրբք Աստուծոյ տան եւ Ազգի հոմար. ամէնքն էլ քաջազունք եւ սուրբք Աստուծոյ բանակին եւ Հայաստանի համար :

Ահա այսպիսի եւ առաւել քան զայս վսեմ եւ անմահ յիշատակներով պանծացեալ հնոցեալ, բարձրացեալ եւ անկեալ աշխարհիմը նորոգ առաջնորդ ընտրուեցաւ մեր Արծուին. այսպիսի Հայրենիքիմը, որ ինչպէս մեծ ամեծ փառքեր նոյնպէս եւ մեծ ամեծ վտանգներ իւր գլխովն անցուցած. բայց ինքն կենդանի աակաւին կծնանի կպահէ եւ կանուշանէ իւր մէջ ժառանգորդ որդիք. որդիք Տարօնոյ, որդիք այն վեհ նախնեաց. որդիք որ այժմ Թշուառ իմէջ վշտաց եւ ողորմելիք. որդիք ծնած իրենց հայրենեաց ծոց. բայց տառապանաց մէջ եւ հայրենեաց խնամոց կարօտ. այնչափ սրբազան վանօրէից եւ եկեղեցեաց մէջ. բայց դրեթէ եկեղեցեաց եւ եկեղեցականութեանց կարօտ. այնչափ սուրբ եւ գերազոյն պարծանաց յիշտակաց հետ. բայց եւ բոլորովին անպէտ : Ահա միակ ցաւալի կէտ :

Առ այս ընտրեցին. եւ առ այս գնաց մեր Արծուին. ցուցանել եւ ծանուցանել, ողբալ եւ յիշեցուցանել, քարոզել եւ ուսուցանել այն Ժողովրդեան իրենց Հայրենիքը. այն որդւոց իրենց նախնիքը. եւ լուսաւոր լինել, ուսումն սիրել. բարոյական ու բանական լուսով զարդարովիլ, Աճսիրական եւ Ազգասիրական զէնքերով վառուիլ, ազգէտ մոլուեց խմէն վնասարեր արմատներ խորտակել. աշխարհի նոր դարուս մարդկութեան լուսաւոր եւ ազատ ասպարէզներ ելնել խիզախել. հայրենեաց համար երջանիկ փառաւոր պսակներ շահել :

Այլ յուսամբ, եթէ չթողուն միայն. մանաւանդ թէ ջանան
փշրել խորտակել արգելքներ Արծառն ընդ առաջ. կյուսամբ
եթէ թեւ թիկունք լինին առ հասարակ եկեղեցական սրոց
կարգ. Ս. Կարապետի ու խտին միաբան չարք. եւ ողջ վի-
ճակի Ազգասէր եւ բարի իշխանք:

Այսպէս քիչ ժամանակէն կյուսացվի որ Տարօնոյ Ազգայնոց
վիճակը պայծառանայ, ուսումն. լուսաւորութիւն տարածվի
նոցա մէջ. նոցա այն ուշիմ եւ ըստ ամենայնի կրթութեան
յարմար և արժանի զաւակունք աշխարհի առաջ ճանցցվին,
չայրենեաց լուսաւորութեան ծառային. ուսեսոյ եկեղեցա-
կանք, ուսումնասէր իշխանք, իմաստուն խորհրդականք լի-
նին և աշխատին. որպէսզի իրենց նախնեաց հայրենեաց ժա-
ռանդութեան պարծանայ իրաւութիւն իրենց վերայ կրեն, եւ
ողջ ազգիս ուրախութիւն եւ գովեստ արժանապէս ընդու-
նեն:

Այսուհետեւ շատ անգամ առիթ կունենամք Տարօնոյ
վիճակին եւ նորա Դնակչաց վերայ. կամ Ս. Կարապետի վան-
քին եւ միւս երեւելի վանքերին տեղեկութիւններ եւ բա-
րեկարգութիւններ լսել ու գրել. որ եւ գիտեմք անշուշտ
չայրենասէր ընթերցողաց ցանկալի եւ հաճելի կլինին:

Գարեգին Արուսեանց
Աշակերտ. Ժ. Վ. Վարդապետ

Ահա տակ այն յիշեալ ձառը, զոր խոստացանք հրատարակել:

ՍԱՒՐՔ ՀԱՅՐ.

Անհրաժեշտ պարտքէմը ստիպեալ՝ մեր արտի նոր
եւ խոր զգացմանց հաւաստիքը կհամարձակվմք մատու-
ցանել ձեզ այսօր. ընդունեցէք կաղաչեմք:

Ուրախ են ողջ հայրենասիրաց սիրտերը ձեզ վերայ, ուրախ են եւ արդի նորոգ բարեփոխակ բաղդին տիրանալուդ. այն սիրտեր, որոնք ազգային շուսաւորութեան յառաջադիմութեանը յարստամ կ'ցանկան եւ կ'ջանան: Ուրախ են, վասնզի զձեզ արժանի իրենց ցանկութեան կ'դանան եւ ձեզմով կը ստանան:

Ահա պսակ ձեր արժանաւորութեան, ահա փիճակ ձեր Ազգասիրութեան. ցնծութիւն եւ պարծանք քո ժառանգութեան, մեզ՝ որ քո ձագերն եմք: Այո՛ պիտի ուրախանանք առաւել եւս մեք: Այժմ երջանկութեան համբուրելի օրերը դուք եւ մեք պիտի ողջունենք եւ ողջագուրենք. դուք որ ընդ հանուր ազգին պայծառութեան եւ բարեւաւորութեան համար յոժար էք եւ կ'սմէք միշտ քացախն ու լեղին, բայց կենդանի կ'պահէ Աստուած ձեր արեւ եւ քաղցըր ձեր որովայն. ձեր առաջ, առպարէզը բաց եւ ապանին պայծառ է: Ազգին ներկայ յառաջխաղացութեան առպարէզ ընդլայնողներէն մէկը դուք էք, Ազգի պատիւը օգուան եւ ճանաչմունքը կ'զարգանայ ձեր հոգւով եւ աշխատանքով: Այսուհետեւ ծարարաղղութիւն ձեզմէ հեռու: Սրտի բերկրութեամբ կ'խօսիմք, ձեր նպատակ, ձեր բարի ցանկութիւններ ի գործ դնելու բարեբաստիկ օրեր շնորհեց Նախախնամութիւն. այսուհետեւ ոսկեզօծ փետուրներով պիտի զարդարուին ձեր թեւեր: Դուք ահա մի նոր յարութիւն առիք: Աստուծոյ կամքը եւ Ազգասիրաց խնամք ձեզ նոր փառք եւ նոր պարտք առաւելացուցին. ուրոց մասնակից է քո ձագուցս հաւատարիմ ու խո:

Հայր, ձեր այս նոր փիճակը երբեմն բացակայութիւն կուտայ մեզմէ՝ ձեր անձին, եւ այդ մեծ ցաւ է մեզ. բայց այսու ամենայնիւ հայրենեաց թշուառ մանկտիներուն,

Տարօնոյ զաւակաց , մեր եղբայրց , այո եւ մեզ իսկ այնչափ
օգուտ է : Իրաւապէս նոցա մէջ լուսաւորութեան եւ բա-
րոյականութեան հոգին քնածէ , զարթուցիչ ձայնի կարօտ .
ինկած է , օգնութեաց կարօտ . ուրեմն թաւառնեցէք ձեր
թեւեր Աստուծոյ առաջնորդութեամբ իմաստութեան լոյսը
Տարօնոյ տգիտութիւնն ստեմացեալ երկրին վրայ տարածել ,
ձեր բարեխնամ եւ հայրախնամ թեւոց հովանիքը ինչպէս
Վարազ , նոյնպէս Ս . Գլակ եւ Տարօնոյ վիճակ թող վայելն
սիրով եւ յուսով :

Աւ այս կ'բարեմաղթեմք , որ վերին Նախախնամութիւն
արդիւնաւոր առնէ ձեր ազգասիրական անձնաւորէր ճի-
շդութեամբ եւ ձեր հայրենավաստակ անդուլ երկասիրութիւնը .
որոնց վրայ Աստուծոյ մատն եւ օրհնութիւնը լինել ամէն
մարդ կ'տեսնէ եւ կ'վկայէ :

Իսկ դուք որ կերթաք , Հայր . տարէք ձեր հետ մեր ար-
տասուաց դառն կաթիլներ , զոր կ'ցօղեմք ձեր առաջ , կ'ցո-
ղեմք ձեր ոտքերու առաջ . տարէք ձեր նոր փառաց հետ
մեր հոգւոց անհատ մորմոքը եւ կ'սկծանայ զգացմունքը .
տարէք մեր սիրտ մեր հոգին ձեզ հետ , Հայրիկ , անմեկին :

Այո՛ գերի է որդի առանց ծնողին :

Մի մոռանաք մխիթարել զմեզ . ապա թէ ոչ , անսպառ
մեր աչեր պիտի ցօղեն եւ մեր սիրտերը պիտի այրին ձեր
կարօտով , ո՛հ ձեր խնամոց սիրով :

Արամ . Բմիշկեան .

Աշակերտ : Ժ . Վ . Վարազայ :

ԻՆԵՃԱՏՈՒՆ ԱՄՔԱՐԻՇՏ

« Տեսի գամբարիշտն .
Վերացեալ եւ բարձրացեալ . . . »

Այգուն այգուն ընդ լուսաբեր ,
Մինչեւ արեւ ծագեալ էր .
Ի հրապարակս քաղաքին
Կառք երկարք գոռ տային .
Ահեղաճայն մեծ գըղղրդեւն ,
Թնդայր շարժէր քաղաքն ողջոյն .
Շարժէր ամբօխն իհանդէս ,
Բարձրամըտին իկըրկէս .
Կըրկէս շքեղ ոսկեփայլուն ,
Լուսով պայծառ գեր զարեւուն .
Անցեալ զանցեալ քան զերկնից ,
Աչք ապշէին ամենից .
Ամէնքն ի յայն կառս խոյափայլ
Աչս յառէին յոսկեկամար .
Յոսկիակուռ ադամանդ
Երկարացն շինեալ պայտ .
Պայտ ընդ պայտի շքիեալ ժամուն
Լոյս ցօլանայր իհամբուն ,
Եւ ընդ լուսոյն զողջ աշխարհ
Լուսաշրջիկ ընթանայր .
Ընթանային հողմոյ զօրէն ,
Բազմաց թուէր կառք հըրեղէն .
Եւ ասէին սա՛ Եղիայ ,
Կամ հընչտա՛կ ոք յերկնից վայ .

Գայր մեծամիտն այսպէս փառօր,
Որոյ նըման ոչ թագաւորք.

Կայսերաց փառքն էր ըստուեր.

Ընդ նորահրաշ այս տեսիլ :

Տեսիլ այս նոր անհամեմատ
Սքանչացոյց զամենայն մարդ :

Ոչ եւս արքայն Սողոմօն,

Ոչ եւս, էանց այն անուէն:

Զանուն վեհին մեծն Օգոստոս
Թող ջնջեսցէ Ողիւմպոս.

Փոխան զայս մեր նոր դիւցազն

Պատկերցէ ինոր փառս :

Փառք՝ Աստուծոյն թերեւս ակն
Փառաբանօղք լինէին.

Եւ մեծամիտն օր աւուր

Փայլէր փառօր նորանոր :

Նոր ձի նժոյգ ոսկերաշ,

Լըծէր վարէր արագ աշարժ,

Նոր կառք կերտեալ բազմահրաշ :

Որ ընթանայր ինքնաքարշ :

Երիւարաց սանձն էր յակինթ,

Շըղթայ յեռեալ էր մարգարիտ,

Թամբն եւ մորակն ականակուն,

Ագիբ իկախ ոսկեծոյլ :

Ոսկի ակունք էին կառաց,

Օղակ ձուլեալ յանգին ականց.

Որ ընդ շքրջանս լոյս ցոլայր :

Լոյս ի յակունս ընթանայր :

Կամար կառուց չըղարշ անօր :

Փայլատակէր լոյս իներքուստ ։

Եւ շողշողիւն լուսահետն ,

Ջաշխարհ ձրգէր իւր ըզհետ ։

Հետ գոյր ամբոխն եւ յառաջէր ։

Ոչ ոք նրմա ժամանէր ,

Ոչ ոք ըզնա ճանաչէր ,

Զի տեսանել հնար չէր ։

Թագչէր ծածկէր , որ հերագոյն

Այսմ փառաց հանգչէր ներքոյ ։

Ոչ ոք ըզնա ճանաչէր ,

Զի տեսանել հրնար չէր ։

Անհրնար էր աչաց մարդոյ

Հայել իրէմն ճաճանչ լուսոյ ։

Սահայն կացին կառքն յանկարծ ,

Էջ մեծամիտն իկառաց ։

Կաց մեծամիտն իմեծ բարձունս ,

Ամբոխն ըզհետ եկաց առ դուրս ։

Եւ հայեցաւ ընդ ամբոխն ։

Ազադակեաց ձայնիւ ճիւ ։

Օ՛խ , զի՛նչ այս փառք ինձ արժանի ։

Յատուած ութեան կարգ հասի ։

Ո՛վ է Աստուած , որ ինձ նրման

Իշխան լիցի այսչափ մարդկան ։

Ո՛վ է Աստուած , որ իբրեւ զիս ,

Փառս ունիցի իվեր յերկինս ։

Տեսէք իմ կառք , իմ երկրարք ,

Եւ իմ պալատ ոսկեղէնկարք ։

Ո՛վ է Աստուած , որ առաւել

Քան զիս փարթամ եւ ճոխ լինէր ։

Ահա ոսկիք իմ ոչ չափին.
 Ահա ակունք իմ անթիւք են :
 Ինձ չէ պիտոյ Արեւուն լոյս,
 Լուսին , աստեղք, եւ արշալոյս.
 Նոքա տրկար են արարած,
 Չի ամպ ծածկէ նոցա ճաճանչ :
 Այլ իմ լուսեր տեսէք ահա,
 Որ յաւիտեան պայծառ մընան :
 Ոչ կարօտիմ ես անձրեւոյ.
 Չի արտօրայք իմ կանաչ կոն :
 Կանաչ մընան իմ բուրաստանք,
 Ջրրով ցօղեալ յորդավլտակ,
 Ահա մեծ գետն եւ մեծ առուն .
 Իմ սեղհական ժառանգութիւնք :
 Իմ են սոքա, որք ջրաւի
 Ոռոգանեն զանդ եւ զայգի .
 Չիմ դաշտ, հովիտ, մարգագետին,
 Լընուն ծաղիօք զարմանալի :
 Ինձ զինչ պակաս, որ Աստուծոյ
 Լիցիմ խոնարհ երկրպագու .
 Իմ հսցն առատ, գանձն անըսպառ .
 Իմ փառք յաւերթ են եւ անձառ :
 Ահա պալատն իմ փառահեղ,
 Բարձրասարաւ չքնաղագեղ .
 Եւ ես իշխան հզօրագոյն,
 Աստուած քան զիս չէ գերագոյն :
 Այսչափ ամէ, յորմէ հետէ
 Ազատ եմ ես յամէն ախտէ .
 Յաւք նեղութիւնք ինձ են օտար :

Գեր քան ըզմարդ ես եմ ծնեալ :

Ուրեմն, ասաց նա ամբոխին,
Ինձ զինչ գովեստ պատկանին :

« Հապո՛ւ, գոչեաց ողջ հանդէս,

Աստուածապէս դու ոմն ես :

— Ուրեմն. կըրկնեաց ամբարիշտն,

Զինչ փառք են ինձ արժանիս :

« Դու, ասացին միաբան,

Դու ես մեր տէր, մեր իշխան :

— Ուրեմն իմ բանք ե՞ն անսուտ :

Կըրկնեաց ամբոխն թէ « անշուշտ », :

— Ուրեմն դուք իմ հրպատանք :

« Անձնանուէ՛ր քեզ մընամք :

— Ուրեմն երկինք, եթէ ես :

« Դու վեհագոյն, դու ես մեծ :

— Ուրեմն արե՞ւ, թէ իմ տուն :

« Քոյդ անըման, քոյդ փայլուն :

— Ուրեմն զըրախտ թ' իմ պալատ :

« Քոյդ փառաւոր ու անկալատ :

— Ուրեմն հրեշտակք, թէ իմ կառք :

« Քոյդ, տէր, անձառ են քոյդ փառք :

— Ուրեմն Աստուած, թէ իմ սուր,

« Քոյդ, ով իշխան, քոյդ հըզօր :

— Ուրեմն ես մեծ, ուրեմն ես տէր գերագոյն :

Օ՛հ, ես Աստուած, դուք իմ ծառայք էք ողջոյն :

Հա բարձրացայ բարձրացայ,

Եւ քան զԱստուած մեծացայ :

Փառաց ի փառս բազմեցայ :

Գեր քան զամէն կարգն անցայ :

Այսպէս տաէր մեծամիտն ,
 Այսպէս վարէր ամբարշտն .
 Եւ բարձրանայր ամբարտաւանն .
 Քան ըզբնութեան իւր սահման :
 Կաց , ամբարշտ , կաց , մի՛ շատ ,
 Մի խիզախեր դու այդ չափ .
 Տանիր ըզքեզ դու մարդ ես ,
 Վատ քան ըզմարդ եւս քան զեւս :
 Ահա յանկարծ օր մի անկաւ
 Յանձին սորա սաստիկ ցաւ ,
 Զոր բըժշկին ճարտար ձեռն
 Ոչ մարթացաւ զայն սրբել :
 Գամ քան զգամ սաստիկանայր ,
 Ամբարշտին անձն համայր .
 Ախտաւորեալ անառողջ ,
 Յանձնէն բուրէր հոտ դըժոխաց :
 Ա՛հ սկսաւ նա գոչել ,
 Եւ լոյս աչաց նորազէր .
 « Եւ ես իցեմ մահացու ,
 Ար հաւատար եմ Աստուծոյ » :
 Այդ զի՛նչ նոր կերպ , նոր բարբառ :
 Ո՛վ , մոլեգնիս չարաչար .
 Ուրեմն ծանեա՛ր ըզքեզ քաջ .
 Տանեա՛ր , թէ ո՞վ է Աստուած :
 Ուրեմն քան զքեզ է՛ հրզօր :

Աստուածն է մեծ թէ քո սուր :

Ուրեմն զո՞ւ մեծ թէ Աստուած ,

Որ զքեզ այդպէս նա դատեաց :

Ուրեմն դու սուտ սընտի ,

Հա՛ կորնչիս խաղառ անհետ .

Աչքըդ . գընան , փառքըդ մընան .

Մարմնոյդ իմէջ որդունք եռան :

Եռան զեռան ողջ զանդամօքդ ,

Ագռաւք խաղան զսկերտօքդ ,

Անդամ անդամ միս անձինդ .

Շանց գազանաց լինի բաժին :

Ահա ծանիր ուրեմն ընքեզ ,

Առք երկարք չօղնեն քեզ .

Աշամանդի լուսոյ փոխան ,

Ահունք աչացդ ցամաքեցան .

Ահա մահուան հողմըն շընչէ .

Ջամբարըշտին յոյս ցըրուէ ,

“ Ո՞վ հըպատակք անձնանքուէրք :

Հասէք զիմ կեանս փըրկեցէք .

“ Ո՞վ իմ պալատ եւ բուրաստան ,

Դուք իմ կենաց ապաստան .

Առէք զիմ անձն իձեր ծոց ,

Զիս զերծուցէք իցաւոյս ” :

Ընդ այս ահա Հրեշտակն ահեղ .

Աոց յանդիման սուսերամերկ ,

Եւ ըզնիզակն ահագին .

Իջոյց հարուած խըրտին :

Ոստեաւ գազան իմահճէն .

Գողաց , “ աւա՛ղ իմ բողղին ” :

)(342)(

Հարուած մի եւս ահագին

Եհար ըզլեօրդըն կըրկին :

Եւ մռնչաց եւ որոտաց ,

Վայ, վայ, վայ ինձ, աղաղակեաց :

Դարձաւ ապա շընչասպառ ,

Զայս բան կարգաց առ աշխարհ :

« Մարդիկ, տեսէք զիմ վախճան :

« Եւ ծաներոյք զձեր արժան :

Գ. Սրուանձտեանց

Աշակերտ . Ժ. Վ. Վարդապ.

ԹԵՆՏՐՈՒՆԵԼԿԵՆ Ս ԼԵՊ

ՎԵՐԶԻՆ ԱՐՏԱՇԻՐ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԴԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Սոյն տեսարան կներկայանայ Տիգրան Պարսից մայրաքաղաքը . ուր Վրա
Պարսից նախարարաց եւ մոգերու հետ բաղմած են : Արտաշիր Ս . Սահակ
հետ պայտ կմանեն . եւ կանչուի Արտաշիր Վրաձ ստեան . իւր Ս . Սա
հակ նախարարաց հետ կման առ դուռս կամ առանձին սենեակը :

Ալ հարցանէ Վրաձ Արտաշիրն եւ յանդիման կառնէ իւր վերայ երե
գանդատներ . կզատասիանէ Արտաշիր : Հայոց նախարարներ կհա
մուկեն զՍ . Սահակ որ համաձայնի իրենց . նա չի յանձն առնուր . կ միջոր
դէ Սուրեն . եւ զայն կարհամարհէ Սուրեն : Այս Արտաշիրն հետ Ս . Սա
հակ եւ Հայոց նախարարք կ կանչուին Վրաձի ատեան . ուր խօսակցութեան
ներ կլինին ամեն կողմից . այս վերջին վճիռ կիջուուի . Արտաշիրն կա
պանք եւ աքարանք . Ս . Սահակայ իշխանութեան ձեռքէն կառնուի .
կաթուղիկոսութեանից կզրկուի եւ կտարուի բանդ . իսկ նախարարք Հա
յոց պարգէւներ եւ դուլեաներ կտանան . Սուրմակ քահանայն կաթու
ղիկոսական ամոռ առած եւ այնպէս կ վերադառնան Հայաստան :
Յուրք Արտաշիր եւ Ողբ Ս . Սահակայ իվերայ Հայաստանի :

Կ ճանաչեա չմայեակ, Կ ճանաչեա Վաչէն. ասոնք ամէն քեզ
համար, քո վնասներ եւ չարիք պատմելու համար՝ գովելի
խորհրդով եւ արդար փէժ լինելու թեամբ մեր դուռն եւ
կած են զքեզ դատել : Այո եւ ես Կ ցաւ իմ քեզ վերայ,
կողորմիմ քո խեղճութեան. սակայն ոչ բոլոր աշխարհիմ վը
նասուց Կ փոխարինեմ իմ խիղճս :

ԱՐՏԱՆԷՐ

Տէր, երկայնմութեամբ կացեք. ինչպէս հաճելի եղած
են ձեզ իմ դատախազներուս բողոք, աւելի հաճելի լինի
իմ անմեղութեան իրաւունք. արդար էք իրաւունք ճանա-
չելու համար, իմաստուն էք խորհուրդ իմանալու համար :
Լսեցիք միայն եւ հաւատացիք իմ չարախօսաց ձայնին. ինչի՞
չը հարցուցիք. թէ ի՞նչ առիթ ունէի ես անհաւատարիմ
լինել Արեայ դրան. ի՞նչ պակասութիւն ձեզմէ կամ ի՞նչ
փառք ուրիշներէ կըսպասէի Իմ թագ գլխիս, իշխանութիւն
ձեռքիս, իմ պաշտպան դուք, իմ հպատակներ ինձի սիրելիք.
ձեզ հաւատարիմք. ամէն կերպով ապահով. թշնամի չունիմք.
խաղաղութիւն եւ շինութիւն է աշխարհի : Բայց գիտեմ
եւ. կան ինձ համար սխերիմներ. նենգաւոր գոռոզ եւ ան-
միտ նախարարներ, որոց նենգութիւնը խաբէական քողով
սքողուած շնորհք գանրէ ձեր մեծութեան առաջ. լսե-
րէք. մի հաւատաք այնպէս : Արտաշիր հաւատարիմ է ձեզի

ՎՈՒՄ

Հաւատարիմ Կ լինելիւ Արտաշիր. եւ արդար Կ լինէինք
խօսքեր, եթէ միայն այս բանի նախարարներ լինէինք

գատախաղներ : Եւ ես քեզ կ'հարցունեմ . ինչ առիթ ու-
նէին նախարարք քեզի զրպարտել . քեզ թշնամանել . ես կը-
ճանաչեմ զանոնք . արդարութեան սերունդ են . մեր աստ-
ուածներէն օրհնուած : Անոնց անկեղծ հաւատարմութիւն
առ մեզ , նենգութիւն կ'համարվի ձեզ . թողունք այս ամէն ,
եւ առանձին առանձին գրեր բողոքներ . քնդունած եմ քեզ
վերայ քո հպատակներէն , հասարակութեան բերնէն . կար-
դացողներ քահա աներ առ հասարակ զգուելով կ'յիշեն
քո անուն . եւ քո երեսը չեն ուզեր տեսնել . մարդիկներ ըզ-
քեզ կ'ատեն . աստուածներ զքեզ կ'դատեն . ես թէ ներեմ
քեզ , արդարութեան պատուհաս եւ աստուածոց պատիժ իմ
վրաս պիտի կրեմ : Չեմ կարող չեմ կարող ներել . դատա-
պարտութեանդ վերջին ժամն է :

ԱՐՏԱՀԻՐ

Վաւ աւքայ . զիս արժանի ամէն կերպ պատուհասնե-
րուն կ'համարես . արդարութեան կամակատար ինք զինքդ
կանուանես . իսկ ողորմածութեան երբէք մի նշոյլ չես ու-
զեր ցոյց տալ : Սողաչեմ անսա ինձ , ես մատնուած այսօր
այս ատենիս մէջ իմ նախարարներու ձեռքով , անպաշտպան
ամէն կողմից . չկայ բարեկամ ինձի , չկայ կարեկից ինձի . ես
կը խոտովանիմ իմ Աստուծոյ առաջ . գիտեմ նա է որ իմ
մեղաց համար զիս լքեալ բարձի թողի ըրերէ . այո դուք
կարողէք ինչ որ ուզէք ինձ անել , ըստ ամենայնի հաւա-
տարիմս անհաւատարիմ ճանաչել : Ո՛հ իմ Աստուածն է զիս
մատնել . Սակայն խնդրեմ , տէր . լսէք իմ մէկ աղաչանքիս
այ . Սահակ հայրապետ , որ ինձի հետ միասին հրամայել էիք
գալ , թող կանչուի . եւ թէ կ'բարեհաճիք հարցուցէք անոր

իմ գործքերս, և յուսամ որ անոր խօսքեր ընդունելի են ձեր
առաջ. Թող նա միջնորդ վկայութեան լինի իմ ու ձեր մէջ:

ՎՈՒՄ

Լ՛յո՛ նա. Սահակ Ստեփանիկոս, քո սպասարարութեան
համախոհ. նա այստեղն է. նա պիտի բեզ համար վկայէ:
Թող գայ, Թող գայ նա ոչ քեզ համար վկայել. այլ իւր
յանցանքը յանձն առնուլ. իւր դատապարտութիւնը կրել:

Աւանդին տեսակ. Հայոց Նախարարք Սուրէն պարթեւի հետ Կիսն
առ Ս. Սահակն:

ՎԱՐԱԶՎԱՂԱՆ

Սրբազան հայրապետ, ձեր գալուստ շատ բարի եղաւ,
և յուսամք որ ձեր բարեհաճութիւն չի խնայէք մեզ. ահա
գործ իւր վախճանը գտած է. Արտաշիրն ալ չը պիտի կըր.
նայ Հայաստանի երեսը տեսնել, եւ մեք առ հասարակ պար-
գերես պիտի մնանք Աստուծոյ եւ մարդկանց առաջ. վասն
զի մի այսպիսի փնտաւար եւ նախատելի թաղաւորից կա-
ղատենք մեր հայրենի աշխարհքը. Արեւաց տէր եւ ողջ
ատեանը արդէն համոզված են. Արտաշիր այսուհետեւ թա-
գաւոր չէ. Չեզ և մնայ միայն, Սրբազան տէր. ձեզ կալա-
չեմք, որ մեր համաձայնութիւնն ընդունէք, եւ մեզ պէս
վրկայէք արքայի առջեւ. ձեր պատւոյն, ձեր աթոռին եւ
ձեր հովուական գուռազանին խնայէք:

Խոհեմութիւն հարկաւոր է այստեղ. եկեղեցւոյ ատ-
եաններ չեն, քաղաքականութիւն Աստուածաբանութեան

պանութիւն կրնես. զարմանալի հայրապետ : Ուրեմն դու
եւս Հայրենեաց վնաս կաւիս, որ կ'ամաչեմք կարծել, կ'մե-
ղանջեմք ասել : Խնդրենք թող տուր այն վատթար անձը.
Թող կորչի. չուզեցինք ոչ իրեն թագաւորական թագը, եւ
ոչ իւր բերած այնչափ վտանգ եւ ամօթանք : Լաւ է արեաց
ազգէն առանց թագի մեզ մի իշխան ունենալ, քան այսպի-
սի ազգային մօլի եւ հայրենաւերթագակալ : Մեզ հետ, մեր
ձայնիս վկայ եղիր, ապա թէ ոչ ամսոս է մեր աշխարհքը,
ամսոս եւ դու որ կ'զրկուիք իրարմից :

Ս. ՍԱՀԱՆ

Խստասիրտ էք եւ սոմխո, յանդիմանութիւն ձեզ հա-
մար անօգուտ. խրատ ձեր ականջաց ատելի. եւ դուք յա-
ւիտեան թշնամի հայրենեաց : Սահակ ձեզ չէ մասնակից.
գնացէք դուք այսուհետեւ ձեր տեսած ճանապարհով.
ձեր ձեռքով քակեցէք ձեր հրգօր աշտարակը — Հայրենի
Թագաւորութիւնը. եւ ձեր ձեռքով բերէք ձեր գլխուն
կորուստ : Բայց ես նոյն եմ. Սահակ ձեզ չէ մասնակից :

Կուլայ արանձին :

ՍՈՒՐԷՆ

Իհե՞դ Սահակ, արդարեւ բոլորովին կ'հիանամ այդքո
բռնած ճամբուդ. ասեմ, բայց կ'ամաչեմ. Դուք խելացի էք,
դուք թերեւս առաջին խելացին էք եւ առաջին պատիւ
ու համարումն ունիք ինչպէս Հայաստանի մէջ նոյնպէս եւ
Արեաց դուռը : Ես միշտ կ'պարծիրմ ձեզ պէս վեհ եւ յա-
ռաջաւոր անձինք ազգական չինելով. իհարկէ եւ այժմ մե-

բանիս մէջ մի խառնուիր եւ մի խառներ դու զիս, եթէ սիրելի կ'համարվիմ քեզ :

ՍՈՒՐԷՆ

Բայց, տէր Պարթեւ, կուգեմ որ ձեր խաղաղասիրուն հետ արդարուե՛ք ալ անսաք: Ինչե՞ր կ'պատմեն Արտաշիւի երայ եւ ի՞նչ պիղծ եւ զազիր դործքերու տէրէ եղեր: Դուք որ ձեր օրինաց սրբազնագործ Քահանայապետն էք, պիտի աւելի դատապարտէք: Այլպիսի անառակ յանցանքներ ձեր Քրիստոս չի ներեր, ինչպէս որ լսեր եմք մեք: Իմ զարմանքն եւ տարակոյտ աւելի այստեղն է ահա. որ դուք այդպիսի մոլի եւ օրինազանց անձմը կ'ջատագովէք, որուն ողջ Հայոց աշխարհ եւ այսպիսի աւագ Դախարարներ զանգատաւոր են. եւ որուն աստուածներն ու արքայն կամին վրէժխնդիր լինել: Իմ ցաւս այնէ որ դուք ձեր անձին եւ ձեր փառքին խնայէք, ահա իմ վերջին խօսքը :

ՍՍԱՀԱԿ

Ի՞նչ եւ Սահակիս վերջին պատասխան այդ տառ՝ խօսքերիդ: Արտաշիւ զազիր եւ պիղծ մոլութիւններու տէրէ, աշխարհ կ'վկայէ, ես ալ դիտեմ: Այդոր դատաստան ինձի կը մնար, իմ սեպհական դործն էր այդ. իսկ ձեր ատենը այդ բանի համար ինչի՞ բերիք հասոցիք: Եւ եթէ հասաւ. դուք ձեր օրէնքով պիտի դատէք: Չեր օրէնք այդպիսին կ'պատկէ կ'վարձադրէ. ինչի՞ մեղաւոր կ'լինիք ձեր օրինաց դէմ. եթէ այդ էր յանցանք, պսակ տուէք իրեն: Ես կ'պաշտպանեմ, իրաւունք ունիմ. անիկայ հաւատարիմ

Հայաստանին վրայ եւ թագ տուի Արտաշէրին, որ Հայաստանին պահապան եւ խնամակալ լինէր : Բայց նա թշնամի եւ աւերիչ դարձերէ : Այլ ցաւիս, գիտեմ կ'ցաւիս անշուշտ դուն ալ . խօսէ ուրեմն քո բողոք, թող վերջանայ վճիռը :

Ս . ՍԱՀԱԿ

Վաւամ արքայ, ես բողոք չունիմ Արտաշէրին վերայ : Արտաշէր յանցաւոր չէ ձեր առաջ : Արտաշէր հաւատարիմ իւր թագին, հաւատարիմ ձեր փառքին եւ կամքին : Արտաշէր մեղաւոր է միայն իւր Բրիտանէական սուրբ օրէնքին : Ձեզ չկայ իրաւունք դատելու զանի : Ձեզ չի վերաբերիր դատապարտելու զանի : Սուտ են, զուր են չարախօսաց լեզուք Արտաշէրին վերայ : Զրպարտուեց միանսոր :

Հարո՛ւնալի՛ն ի՛նչ յաջորդէ ի՛նչ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Ճարտարապետն ամենեցուն

Զիս յօրինեաց գեղեցկագոյն .

Իբրեւ վրան Սողոմոնեան

Բայց չեմ վրան ըստ բնութեան .

Ունիմ փոքրիկ սիւն մի բարակ .

Հարիւր հազար փողոց բանդակ .

Զիս կ'շինեն համեղ խորտիկ ,

Եւ կ'գովին խիտ շատ մարդիկ :

Բ . Մկրտիչ Հիրօեանց .

Ա . Ժ . Վ . Վարազայ :

ԲՈՎՆԴԵԿՈՒԹԻՒՆ ԿԻՒԹՈՑ .

Արժիւ գնաց ի Տաւրոն : 321

Մեծատուն ամերիկյան: 335

Թատրոնական, վեպ . . . Հեղին. Արտաշիր. Արշակունի Թա.

7. 11. 1892 342

[illegible]

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԻԿ

Ի վերջ, 'ի Բաշէշ, 'ի Մաշ, 'ի Կարէն, Էրէն - Ի Բաշ
Տանդի Կառն շո-րո-շոյն ալ Բաշ Մաշի Կարէն :

ተሰጠ ስለሆነ ሁሉም ሰላማዊ ሰራተኞች ለሰላም ስራ ለማድረግ ይችላሉ።

በግራም ስር ይጻፍ፡

ጸሐፊው ማህበረ ቅዱስ ኤፒስኮፖስ ገብረ ጊዮርጊስ ገብረ ሰላሳ ፡